ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՈՐԳԻ ՏՐԱՅԿՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 14-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ժողովի նախագահության նախագահ Գեորգի Տրայկովը այցելեց Մայր Տաճար, ընկերակցությամբ Բուլղարիայի արտաքին գործերի մինիստր Իվան Բաշևի, Սովետական Միությունում Բուլղարական Ժողովրդական Հանրապետության դեսպան Ստոյան Դ. Կարաջովի և այլ պետական հարգարժան գործիչների։

Մեծապատիվ հյուրի հետ էին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Մ. Պ. Գեորգաձեն, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Խ. Մարգարյանը, Հայկական ՍՍՌ արտաքին գործերի մինիստր Բ. Գ. Մարտիրոսյանը և այլ պաշտոնական անձինք։

Մայրավանքի արևելյան դարբասի առաջ մեծարգո հյուրը դիմավորվում է հարգալիր մեծարանքով Մայր Աթոռի միաբանության կողմից և առաջնորդվում Մայր Տաճար, և ապա եկեղեցական արվեստի թանգարան։

Այնուհետև Բուլղարական Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ժողովի նախագահության նախագահ Գեորգի Տրայկովը, իր շքախմբի անդամների հետ, Վեհարանում այցելում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։

Նորին Ս. Օծությունը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության, սրտագին ողջունում է Նորին Գերազանցություն պր. Նախագահին և հարգարժան բոլոր հյուրերին, շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում անցյալում բուլղար ժողովրդի և երկրի կողմից գաղթական հայ ժողովրդին ցույց տրված եղբայրական ասպնջականության համար, շեշտելով, որ «անցյալում տառապանքի մեջ եղբայրացել էին բուլղար և հայ ժողովուրդները, իսկ այսօր նրանք եղբայրացած են իրենց ազգային վերածննդյան սխրանքների մեջ, եղբայրական ժողովուրդների ընտանիքում, և հանուն խաղաղության մղած պայքարում»։

Մեծապատիվ հյուրը խոսք առնելով, իր խորունկ շնորհակալությունն է հայտնում ջերմ ընդունելության և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրտագին խոսքերի համար, ավելացնելով, որ հայ և բուլղար ժողովուրդների եղբայրությունն ամուր է և անխախտ, որովհետև նրանց միացնում են ոչ միայն անցյալի տառապանքներն ու թափված արյունը, այլ նաև վաղվա պայծառ կյանքի նկատմամբ երկու ժողովուրդների վճռականությունն ու մնայուն խաղաղության պաշտպանության գիտակցությունը։

Այնուհետև ջերմ մթնոլորտում տեղի է ունենում զրույց։

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ժամը 11-ին մեծապատիվ հյուրը հրաժեշտ է առնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից։